ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	*№ 70, ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ*
Ընդունող մարմինը՝	*Տնօրինություն*
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	*16.03.2023թ. թիվ 20-Լ որոշում*
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	*16.03.2023թ.*
Խմբագրության հերթական համարը՝	*12*
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	*Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ*
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	*Հաճախորդների սպասարկման դեպարտամենտ*
Հրապարակայնությունը՝	☒ *հրապարակվող* ☐ *սահմանափակ* ☐ *գաղտնի*

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ակտով սահմանվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») կողմից Հաճախորդների հետ ավանդային պայմանագրերի կնքման ընթացակարգը:

1.2. Սույն ընթացակարգի դրույթների կատարումը պարտադիր է Հաճախորդներից ավանդների ներգրավման գործընթացին առնչվող Բանկի բոլոր ստորաբաժանումների և աշխատակիցների համար:

1.3. Բանկն իրականացնում է Բանկում հաշիվ(ներ) բացած անձանցից ավանդների ներգրավում: Բանկը չի կնքում ավանդային պայմանագրեր այն ավանդատուների հետ, որոնք չունեն ընթացիկ հաշիվներ Բանկում:

1.4. Բանկը քաղաքացիաիրավական սուբյեկտներից ներգրավում է ավանդներ՝ ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով, Բանկի կանոնադրությամբ և սույն ընթացակարգով:

1.5. Բանկն ավանդները ներգրավում է ՀՀ դրամով և արտարժույթով:

1.6. Հաճախորդների ավանդների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը, ավանդային գումարների ապահովվածությունը և վերադարձը Բանկի կողմից երաշխավորվում են:

1.7. Ավանդատուի մասին ՀՀ օրենսդրությամբ գաղտնիք հանդիսացող տեղեկատվության հրապարակումը և տրամադրումը երրորդ անձանց Բանկը իրավասու է կատարել միայն ավանդատուի գրավոր համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

1.8. Բանկի ավանդային բազայի նախընտրելի կառուցվածքը և ժամկետայնությունը կառավարվում է Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեի կողմից:

1.9. Ամբողջ աշխատանքը, կապված յուրաքանչյուր ավանդային պայմանագրերի կնքման հետ, բաժանվում է հետևյալ փուլերի.

1.9.1 Ավանդների ընդունման պայմանների ներկայացում,

1.9.2 Ավանդային պայմանագրի պատրաստում և կնքում,

1.9.3Ավանդային պայմանագրի հաստատում,

1.9.4 Ավանդների դիմաց տոկոսադրույքների սահմանում և հաշվարկում,

1.9.5 Ավանդի և տոկոսագումարի վճարում:

1.10. Բանկը Հաճախորդների հետ կնքում է ստանդարտ և ոչ ստանդարտ պայմաններով ավանդային պայմանագրեր:

1.10.1. Ստանդարտ պայմաններով հաստատված ավանդային պայմանագրերը նախատեսված են Բանկի կողմից ավանդ ընդունելու հրապարակային առաջարկների պայմաններով ավանդների համար: Ավանդ ընդունելու հրապարակային առաջարկները Բանկը տեղադրում է իր ինտերնետային կայքում :

1.10.2. Ոչ ստանդարտ պայմաններով ավանդային պայմանագրերը կնքվում են այն Հաճախորդների հետ, որոնցից Բանկն ընդունում է ավանդ՝ Բանկի կողմից ավանդ ընդունելու հրապարակային առաջարկից տարբերվող պայմաններով:

1.11. Ավանդային պայմանագրերի կնքման հետ առնչվող սույն ընթացակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին ակտերով:

1.12. Սույն ընթացակարգի իմաստով.

- ***Ավանդային պայմանագիր***՝ թղթային, էլեկտրոնային տարբերակով կամ հեռահար համակարգերի միջոցով Բանկի և Ավանդատուի միջև կնքված պայմանագիր,
- ***Հաճախորդ կամ Ավանդատու*** ՝ Բանկի հաշվետեր հաճախորդ, ով Բանկի հետ կնքել է Ավանդային պայմանագիր,
- ***Գործառնական բաժին***՝ Հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ենթակառուցվածքային ստորաբաժանում,
- ***Համաձրման բաժին*** ՝Հաճախորդերի հաշիվների բացման և վարման համար պատասխանատու ենթակառուցվածքային ստորաբաժանում,
- ***Սպասարկող***՝ Գործառնական բաժնի աշխատակից, ով իր պաշտոնեական հրահանգի համաձայն իրականացնում է ավանդային պայմանագրերի կազմում և «Գործառնական օր» ծրագրում գործարքների մուտքագրում,
- ***Հաստատող***՝ Գործառնական բաժնի աշխատակից, ով Բանկի ներքին ակտերի հիման վրա իրականացնում է «Գործառնական օր» ծրագրում գործարքների ստուգում և հաստատում,
- ***«Գործառնական օր» ծրագիր*** ՝ Բանկի հաշվապահական հաշվառման և հաշվետվողական ծրագրային համակարգ,
- ***Հեռահար սպասարկման համակարգեր*** ՝ Ինտերնետ-բանկ (Մոբայլ-բանկ) համակարգ, որի միջոցով հաճախորդը կարող է կնքել ավանդային պայմանագիր/համաձայնագիր Բանկի կողմից սահմանված ձևանմուշների կիրառմամբ, ինչպես նաև նամակ ուղարկելու միջոցով:
- ***Ստորագրություն*** ՝ Բանկի ներկայացուցչի կամ Հաճախորդի (նրա ներկայացուցչի) կողմից ցանկացած տեսակի փաստաթղթի (պայմանագրի) թղթային բնօրինակի վրա ձեռագիր բնօրինակ դրված ստորագրություն կամ հատուկ սարքերի միջոցով Բանկում էլեկտրոնային տարբերակով դրված ստորագրություն կամ «.PDF» ֆորմատի էկետրոնային ցանկացած փաստաթղթի (պայմանագրի) վրա էլեկտրոնային եղանակով դրված ստորագրություն (էլեկտրոնային ստորագրությունը պետք է հաստատված լինի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (ԷԿԵՆԳ) կողմից կամ Ավանդի պայմանագիրը Բանկ ուղարկված լինի կապի այն միջոցներով, որոնք հնարավորություն կտան Բանկին՝ հաստատելու պայմանագիրը Ավանդատուի կողմից ստորագրված լինելու իսկությունը):

1. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2.1. Հաճախորդին ավանդների ընդունման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը և պայմաններին ծանոթացումն իրականացնում են Գործառնական բաժնի աշխատակիցները:

2.2. Բանկի կողմից ներգրավվող ավանդներն ըստ ժամկետայնության կարող են լինել ցպահանջ և ժամկետային:

2.3. Բանկում ներդրված ավանդի վրա կարող է արգելանք դրվել կամ իրականացվել բռնագանձում միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

2.4. Սպասարկողը նախքան ավանդային պայմանագրի կնքումը Հաճախորդին պարտադիր տեղեկացնում է 3.1 կետում նշված ավանդին վերաբերող տվյալները, ինչպես նաև ստորև ներկայացված լրացուցիչ պայմանները.

- ֆիզիկական անձ հանդիսացող ավանդատուի դեպքում ավանդների հատուցման երաշխավորման պայմանները և կարգը,
- ավանդատուի պահանջով ժամկետից շուտ ավանդը վերադարձնելու դեպքում կատարվող վերահաշվարկ, որի համաձայն ավանդի դիմաց վճարվում է տվյալ պահին գործող և Բանկի կայքէջում հրապարակված՝ Ավանդի արժույթով ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքին համապատասխան չափով հավելագրված տոկոսագումար և գանձվում է ավանդի գումարից արդեն իսկ վճարված տոկոսագումարները,
- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում Ավանդատուին վճարվելիք տոկոսագումարներից գանձվող եկամտային հարկը,
- ֆիզիկական անձ հանդիսացող ավանդատուի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարի անվճար կանխիկացումը,
- տեղեկատվական ամփոփագիրը:

2.5. Ավանդների ընդունման վերաբերյալ պայմանների ներկայացումը կարող է իրականացվել հետևյալ միջոցներով.

2.5.1. Անհատական հանդիպումներ Բանկում կամ հաճախորդի մոտ,

2.5.2. Հեռախոս, փոստ,

2.5.3. Բանկի ինտերնետային կայք, էլեկտրոնային փոստ (e-mail):

2.6. Հաճախորդի կողմից ավանդային պայմանագիր կնքելու վերաբերյալ ցանկություն հայտնելու դեպքում Սպասարկողը տրամադրում է նրան ավանդային պայմանագիրը՝ ծանոթանալու նպատակով: Հաճախորդի համար ավանդային հաշվի բացումն իրականացվում է համաձայն Բանկի «Հաճախորդների բանկային հաշիվների բացման և վարման ընթացակարգ»-ի:

2.7. Այն դեպքում, երբ Հաճախորդն ավանդ ներդնելու վերաբերյալ հեռահար սպասարկման համակարգերի միջոցով նամակ է ուղարկում Բանկ՝ նշելով նախընտրելի ավանդի տեսակը, ներդրվող գումարն ու արժույթը, ավանդի ժամկետը, տոկոսագումարի վճարման կարգը, արժույթն ու տոկոսադրույքը, մարումից հետո ավանդի երկարաձգումը, և Հաճախորդի ավանդ ներդնելու պահանջները համապատասխանում են Բանկի ավանդ ընդունելու հրապարակային առաջարկի հետ, ապա Սպասարկողը սույն ընթացակարգի դրույթներին համապատասխան պատրաստում է Ավանդային պայմանագիրը և մուտքագրում Գործառնական օր ծրագիր:

2.8. Սպասարկողը ստորագրված և կնքված ավանդային պայմանագրի էլեկտրոնային տարբերակը հեռահար սպասարկման համակարգերի միջոցով ուղարկում է Հաճախորդին:

2.9. Ավանդային պայմանագիրը սույն ընթացակարգի դրույթների համաձայն անցնում է հաստատման համապատասխան փուլերը, և ավանդը համարվում է ավանդադրված Ավանդի պայմանագրի կնքման օրը: Պայմանագրի օրինակը Հաճախորդի ուղարկած նամակի հետ միասին Բանկում պահվում է համաձայն սույն ակտի 4.3. և 4.7. կետերի:

2.10. Այն դեպքում, երբ Հաճախորդի ավանդ ներդնելու պահանջները չեն համապատասխանում Բանկի ավանդ ընդունելու հրապարակային առաջարկի հետ, ապա Սպասարկողը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Գործառնական բաժնի ղեկավարին, որը Հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ «ՀՍԴ») և Բանկի ներդրումային գործառնությունների համար պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ «ՆԴ») ղեկավարների հետ համատեղ հարցը ներկայացնում է Բան-

կի Գործադիր տնօրենին: Գործադիր տնօրենը որոշում է կայացնում Հաճախորդի ավանդ ներդնելու պահանջները բավարարելու կամ մերժելու մասին:

2.11. Հարցի դրական լուծման դեպքում Գործառնական բաժնի ղեկավարի հանձնարարությամբ կազմվում է ավանդային պայմանագիրը, որը նշագրվում է Գործառնական բաժնի ղեկավարի, ՀՍԴ ղեկավարի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև իրավաբանական գործառնությունների համար պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ «ԻԲ») ղեկավարի և ՆԴ ղեկավարի կողմից:

2.12. Հարցի բացասական լուծման դեպքում Սպասարկողն այդ մասին անմիջապես տեղեկացնում է Հաճախորդին:

3. ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԿՆՔՈՒՄ

3.1. Հաճախորդի կողմից ավանդային պայմաններին ծանոթանալուց և պայմանագիր կնքելու վերաբերյալ ցանկություն հայտնելուց հետո Սպասարկողը մուտքագրում է «Գործառնական օր» ծրագրում հետևյալ տվյալները.

3.1.1. պայմանագրի համար,
3.1.2. ձևանմուշի համարը,
3.1.3. հաճախորդի անվանումը,
3.1.4. արժույթը,
3.1.5. հաշվարկային հաշիվ,
3.1.6. տոկոսների վճարման հաշիվ,
3.1.7. ավանդի գումարը,
3.1.8. պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է, թե ոչ,
3.1.9. ավանդի կնքման ամսաթիվը,
3.1.10. ավանդի տոկոսադրույքը,
3.1.11. ավանդի վերահաշվարկի տոկոսադրույքը,
3.1.12. ավանդի հատկացման ամսաթիվը,
3.1.13. պարտքերի ավտոմատ մարման նշումը,
3.1.14. ավանդի մարման ժամկետը,
3.1.15. ավանդի տեսակը,
3.1.16. տոկոսագումարը փոխարկվում է, թե ոչ,
3.1.17. պայմանագրի թղթային համարը,
3.1.18. տոկոսագումարի վճարման պարբերականությունը (ժամկետի վերջում կամ ամենամսյա),
3.1.19. այլ տվյալներ, պայմաններ և դրույքներ, որոնք համաձայնեցված են Հաճախորդի և Բանկի միջև (ոչ ստանդարտ պայմանագրերի դեպքում):

3.2. Սպասարկողը պարտավոր է ստուգել, որ ավանդի մարման օրը հանդիսանա աշխատանքային օր: Եթե պայմանագրի կնքումից հետո մարման օրը սահմանվում է ոչ աշխատանքային օր, ապա մարումն իրականացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

3.3. Սպասարկողը «Գործառնական օր» ծրագրից ավանդային պայմանագիրը տպում է երկու օրինակից, նշագրում և ներկայացնում է Հաճախորդին՝ ստորագրման: Սպասարկողը

պարտավոր է ստուգել ավանդային պայմանագիրը ստորագրող անձի ստորագրության և կնիքի (առկայության կամ Հաճախորդի ցանկության դեպքում) համապատասխանությունը Հաճախորդի ստորագրության նմուշների քարտում առկա ստորագրության նմուշների հետ:

3.4. Այն դեպքերում, երբ ավանդային պայմանագիրը կնքվում է Հաճախորդի հետ առանց առերես շփման և առանց հեռահար սպասարկման համակարգերի կիրառման, Սպասարկողը տեսածրած ավանդային պայմանագիրն էլեկտրոնային եղանակով ուղարկում է Հաճախորդին՝ ստորագրման, որից հետո իրականացնում է սույն ընթացակարգի 3.5. և 3.6. կետերում նկարագրված գործողությունները: Առցանց ավանդների ներդրման դեպքում Սպասարկողն իրականացնում է սույն ընթացակարգով սահմանված բոլոր գործողությունները՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ուղարկված առցանց ավանդների ներդրման հայտի տվյալները (Հավելված 1):

3.5. Հաճախորդի կողմից ստորագրված ավանդային պայմանագրերը Սպասարկողը ներկայացնում է Գործառնական բաժնի ղեկավարին կամ վերջինիս պարտականությունները կատարող աշխատակցին (հաստատողին), ով ստուգում է 3.1. կետում նշված տվյալների առկայությունը, նշագրում, որից հետո Սպասարկողն ավանդային պայմանագրերը ներկայացնում է ՀՍԴ ղեկավարին կամ ՀՍԴ ղեկավարի տեղակալին:

3.6. ՀՍԴ ղեկավարը/տեղակալը ստուգում է ավանդային պայմանագրում անհրաժեշտ վավերապայմանների առկայությունը, նշագրում է պայմանագիրը, որից հետո պայմանագիրը պատշաճ կերպով ստորագրվում է:

3.7. Ավանդային պայմանագրի գործողության ժամկետի լրացման դեպքում, եթե հնարավոր չի լինում կապ հաստատել Հաճախորդի հետ, Սպասարկողը վերակնքում է ավանդային պայմանագիրը նախկին պայմանագրով սահմանված ժամկետով ու պայմաններով, եթե Ավանդը տվյալ պահին բավարարում է Բանկի կողմից սահմանված և Բանկի տնային էջում հրապարակված պայմաններին, իսկ տոկոսադրույքը՝ տվյալ պահին այդ ժամկետի և արժույթի համար Բանկի սահմանած տոկոսադրույքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

3.8. Բանկը կարող է վերակնքել ավանդային պայմանագիրը նախկին պայմանագրով սահմանված ժամկետով ու պայմաններով՝ սահմանելով տվյալ պահին այդ ժամկետի և արժույթի համար Բանկի սահմանած տոկոսադրույքից բարձր տոկոսադրույք:

3.9. Սույն ընթացակարգի 3.7. և 3.8. կետերում նկարագրված դեպքերում Գործառնական բաժնի ղեկավարը Գործադիր տնօրենին զեկուցագրով ներկայացնում է առաջարկ ավանդային պայմանագրի վերակնքման վերաբերյալ՝ նշելով ժամկետը, տոկոսադրույքը և ավանդի գումարը: Գործադիր տնօրենի հավանությունը ստանալուց հետո իրականացվում են սույն ընթացակարգով սահմանված հերթական քայլերը:

3.10. Յուրաքանչյուր վերակնքված ավանդային պայմանագրի դեպքում (չի վերաբերում երկարաձգումներին) Սպասարկողը պարտավոր է Հաճախորդին տրամադրել Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին գրավոր ծանուցումը և տեղեկատվական ամփոփագիրը կապի այն եղանակով, որը նախընտրել և նշել է Հաճախորդը հաշիվների բացման իր դիմումում:

3.11. Վերակնքված ավանդային պայմանագրերը սույն ընթացակարգով սահմանված ձևով համապատասխան պատասխանատուների նշագրումներով ներկայացվում են պատշաճ կերպով ստորագրման:

3.12. Գործառնական բաժնի ղեկավարը պարտավոր է տեղեկացնել ՆԴ ոչ ստանդարտ ավանդային պայմանագրի կնքելու մասին, պայմանագիրը նաև նշագրվում է ՆԴ ղեկավարի/տեղակալի կողմից:

3.13. Ավանդային պայմանագիրը կնքվում է հաճախորդի հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում, այլ դեպքերում հարցը կարգավորվում է Գործադիր տնօրենի կողմից:

3.14. Ավանդի մարման նախորդող օրը Հաճախորդին ուղարկվում էSMS հաղորդագրություն՝ Ավանդի մարման վերջնաժամկետի վերաբերյալ:

3.15. Ավանդի երկարաձգման օրը և դրան նախորդող օրը Հաճախորդին ուղարկվում է SMS հաղորդագրություն՝ Ավանդի երկարաձգման վերաբերյալ:

4. ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

4.1. Պատշաճ կերպով ստորագրված ավանդային պայմանագիրը (թղթային կնքված լինելու դեպքում՝ պայմանագրերի երկու օրինակները) վերադարձվում են Հաստատողին:

4.2. Հաստատողը ստուգում է «Գործառնական օր» ծրագրում մուտքագրված պայմանների համապատասխանությունը ավանդային պայմանագրի պայմաններին և հաստատում է գործարքը, որից անմիջապես հետո կատարվում է ավանդի ներգրավման գործարքի մուտքագրում և հաստատում:

4.3. Թղթային ստորագրված ավանդային պայմանագրի մեկ օրինակը կարվում է Համադրման բաժնում պահվող ավանդների թղթապանակում, իսկ տեսածրած օրինակը կամ էլեկտրոնային եղանակով ստորագրված պայմանագիրը պահվում է Գործառնական օր» -ծրագրի ավանդային պայմանագրի «Կցված Ֆայլեր» դաշտումիսկ մյուս թղթային օրինակը վերադարձվում է Հաճախորդին:

4.4. Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին գրավոր ծանուցումը կազմվում է երկու օրինակից, որի՝ բանկում մնացող օրինակի վրա ստորագրում է Հաճախորդը, իսկ մյուս օրինակը տրամադրվում է Հաճախորդին առձեռն, էլեկտրոնային փոստով կամ հեռահար սպասարկման համակարգերով:

4.5. Ավանդային պայմանագրի կնքումը և «Գործառնական օր» ծրագրում ձևակերպումն իրականացվում է Հաճախորդի կողմից ավանդ ներդնելու ցանկություն հայտնելու նույն բանկային օրը:

4.6. Ավանդի պայմանագրի ներդրման, ավանդի գումարի փոփոխման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը վերջնական ստորագրվելուց հետո Սպասարկողը «Գործառնական օր» ծրագրից տպում է ավանդային հաշվից քաղվածք երկու օրինակից և տրամադրում Հաճախորդին (առձեռն կամ էլեկտրոնային եղանակով):

4.7. Հաճախորդի կողմից ստորագրած ավանդային հաշվից քաղվածքի մեկ օրինակը կարվում է Համադրման բաժնում պահվող ավանդների թղթապանակում, տեսածրած օրինակը պահվում է Գործառնական օր» -ծրագրի ավանդային պայմանագրի «Կցված Ֆայլեր» դաշտում, իսկ մեկ օրինակը տրամադրվում է Հաճախորդին՝ առձեռն, էլեկտրոնային փոստով կամ հեռահար սպասարկման համակարգերով:

5. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

5.1 Բանկի կողմից ներգրավվող ավանդների դիմաց տոկոսադրույքները Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեի նիստում քննարկվելուց հետո հաստատվում են Բանկի Տնօրինության կողմից:

5.2 Ժամկետային ավանդների դիմաց տոկոսադրույքները սահմանվում են տարեկան կտրվածքով և վճարվում են համաձայն կնքված պայմանագրերի:

5.3 Ժամկետային ավանդների դիմաց սահմանվող տոկոսադրույքները կարող են տարբերակվել՝ ըստ քաղաքացիաիրավական սուբյեկտների, ինչպես նաև ավանդային գումարների և ժամկետների մեծությամբ:

5.4 Ժամկետային ավանդների դիմաց տոկոսագումարների հաշվարկն իրականացվում է պարզկամ բարդ հաշվարկման եղանակով, որը կարգավորվում է Բանկի և ավանդատուի միջև կնքված ավանդային պայմանագրով:

5.5 Ավանդների դիմաց կիրառվող տոկոսադրույքը սահմանվում է ավանդային պայմանագրով և կարող է փոփոխվել միայն պայմանագրի փոփոխման կամ երկարաձգման դեպքում:

5.6 Ցպահանջ ավանդների նկատմամբ տոկոսագումարների հաշվարկն իրականացվում է յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո տվյալ ամսվա վերջին օրը, տվյալ ամսվա վերջին օրը հաշվետու ամսվա գումարի միջին մնացորդի նկատմամբ՝ Բանկի կողմից հաշվարկման պահին հաստատված տոկոսադրույքով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

5.7 Ժամկետային ավանդները պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ պահանջելու դեպքում Բանկի կողմից կատարվում է մինչև այդ կուտակված տոկոսագումարների վերահաշվարկ և այդ ավանդների դիմաց վճարվում է պայմանագրով նախատեսված տոկոսագումար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Գործադիր տնօրենի կամ Տնօրինության կողմից սահմանված որոշումներով կամ հրամաններով առանձին դեպքերում, կախված ավանդի ժամկետից և մարմանը մնացած օրերի քանակից կամ հաճախորդի գործող ավանդների քանակից, հաճախորդի կարևորությունից, հնարավոր է պայմանագրով վճարել մինչ այդ կուտակված տոկոսները առանց վերահաշվարկի կամ տվյալ ժամանակահատածի համար սահմանված տոկոսադրույքով վերահաշվարկված տոկոսագումար:

6. ԱՎԱՆԴԻ ԵՎ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄ

6.1 «Գործառնական օրե ծրագրում ավանդի ներգրավման գործարքը կատարելուց հետո ավտոմատ ձևավորվում է տոկոսագումարների վճարման ժամանակացույցը՝ ամենամսյա կամ ժամկետի ավարտին կամ այլ պարբերականությամբ՝ հիմք ընդունելով ավանդային պայմանագրի պայմանները:

6.2 Եթե «Գործառնական օրե ծրագրում ավանդի գործարքը ձևակերպելիս դրվել է «Պարտքերի ավտոմատ մարումե նշումը, ապա ավանդի կամ տոկոսագումարի վճարման օրն ավանդի կամ տոկոսագումարների վճարման գործարքները ձևակերպվում են ավտոմատ:

6.3 Հաստատողը ստուգում է Ավանդի և/կամ տոկոսագումարի վճարման ժամկետի ու գումարի ճշտությունը և հաստատում է գործարքը:

6.4 Եթե այլ բան նախատեսված չի ավանդային պայմանագրով, ավանդը և/կամ տոկոսագումար(ներ)ը վճարվում են Հաճախորդի անունով Բանկում բացված ընթացիկ հաշիվներին:

6.5 Եթե Հաճախորդի պահանջով Ավանդը կամ դրա մի մասը վերադարձվում է Ավանդի պայմանագրում նշված Ավանդի վերադարձման ժամկետից շուտ, ապա Սպասարկողը կազմում է Հաճախորդի և Բանկի միջև կնքված Ավանդի կամ դրա մի մասի վաղաժամկետ մարման երկկողմանի լրացուցիչ համաձայնագրի նախագիծը:

6.6 Սպասարկողը լրացուցիչ համաձայնագրի նախագիծը ներկայացնում է Գործառնական բաժնի ղեկավարին կամ վերջինիս պարտականությունները կատարող աշխատակցին (հաստատողին), ով ստուգում է համաձայնագրում նշված դրույթներն ու տվյալները, նշագրում, որից հետո համաձայնագրի նախագիծը ստուգվում և նշագրվում է նաև ՀՍԴ ղեկավարի/տեղակալի և ՆԴ, ԻԲ ղեկավարի/տեղակալի կողմից (ըստ անհրաժեշտության) ու ներկայացվում Հաճախորդին՝ ստորագրման (կնիքի առկայության կամ Հաճախորդի ցանկության դեպքում դրվում է նաև կնիքը): Հաճախորդի կողմից ստորագրվելուց հետո համաձայնագրերը ներկայացվում են պատշաճ կերպով ստորագրման: Սպասարկողը «Գործառնական օրե համակարգում մուտքագրում է Ավանդի կամ դրա մի մասի վերադարձման, տոկոսագումարի վերահաշվարկման գործարքները՝ համաձայն լրացուցիչ համաձայնագրի դրույթների:

6.7 Պատշաճ կերպով ստորագրված լրացուցիչ համաձայնագիրը տրամադրվում է Հաստատողին:

6.8 Հաստատողը ստուգում է «Գործառնական օրե ծրագրում մուտքագրված գործարքի համապատասխանությունը լրացուցիչ համաձայնագրի պայմաններին և հաստատում է գործարքը:

6.9 Ստորագրված լրացուցիչ համաձայնագրերը պահպանվում են սույն ընթացակարգում պայմանագրերի համար նկարագրվածի համաձայն:

6.10 Գործառնական բաժինը պատասխանատու է ավանդների և տոկոսագումարների ժամանակին վճարման համար:

6.11 Գործառնական բաժինը ավանդների մարման վերաբերյալ տեղեկությունները պարտավոր է տտրամադրել ՆԴ-ին՝ համաձայն Բանկում գործող կարգերի:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն ակտով սահմանված դրույթների կատարման, խախտումների բացահայտման և առաջացած խնդիրների մասին զեկուցման, ինչպես նաև ակտի վերանայման համար պատասխանատու է ՀՍԴ ղեկավարը:

ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ

Հավելված 1

ՀԱՅՏ

Առցանց ավանդի ներդրման

Հաճախորդ (անուն, ազգանուն)՝ ☐

Ավանդատեսակ՝ **«ՍՏԱՆԴԱՐՏ»**

Արժույթ՝ ☐AMD ☐ USD ☐ EUR

Գումար՝ ☐

Տոկոսագումարի վճարման պայմաններ՝ ☐ամսական ☐ ժամկետի ավարտին

Տոկոսագումարի պահպանման արժույթ*՝ ☐AMD ☐USD ☐EUR

Ժամկետ՝ ☐ օր

Ավանդի ավտոմատ վերակնքում՝ ☐Այո ☐Ոչ

ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿՈՒՄ սահմանված են նվազագույն սահմանաչափեր հետևյալ արժույթների համար՝

ՀՀ դրամ՝ սկսած ---------- ից
ԱՄՆ դոլար՝ սկսած ---------- ից
Եվրո՝ սկսած ---------- ից
Շվեյցարական ֆրանկ՝ սկսած ---------- ից

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ*

Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվարկված տոկոսագումարները ավանդատուի ցանկությամբ վճարվում են այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը կամ ՀՀ դրամով՝ տվյալ պահին բանկի կողմից հրապարակված առքի փոխարժեքով:

Ավանդի ներգրավում



Ավանդի դադարեցում



* վերաբերվում է նաև փոփոխական ավանդից մինչև 50% դադարեցման դեպքին

** հաճախորդը կարող է պայմանավորվել վաղաժամկետ մարման այլ տոկոսադրույք, փոփոխական տոկոսադրույքով ավանդի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է 0.5%

*** կանխիկ ելքի դեպքում հաստատվում է նաև դրամարկղի կողմից